ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱ~~ՍԻՆ~~

~~ՀՈԴՎԱԾ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ~~

~~դրոշմապիտակ՝ սահմանված չափեր, ձև և կեղծումից պաշտպանվածության աստիճան ունեցող ինքնասոսնձվող դրոշմանիշ, որի վրա նշված ապրանքի համառոտ անվանումը, սերիան և հերթական համարը հնարավորություն են տալիս նույնականացնել դրանով դրոշմավորված ապրանք արտադրողին կամ ներմուծողին.~~

ՀՈԴՎԱԾ 3.1 ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

4. Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից կնքվող վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) տրամադրման պայմանագրերը ուժի մեջ են մտնում պայմանագիր կնքած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից օգտագործման (շահագործման) համար նախատեսվող հսկիչ-դրամարկղային մեքենայի՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար սահմանված կանոններին համապատասխան~~սահմանված կարգով~~ հարկային մարմնում գրանցման քարտի պատճենը կազմակերպչին ներկայացնելու օրվանից: Օգտագործվող հսկիչ-դրամարկղային մեքենան նորով փոխարինելու դեպքում նախկինում գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցումից հանելու օրվանից մինչև նոր հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կազմակերպչին ներկայացնելու օրը վաճառատեղում (այդ թվում՝ առևտրի օբյեկտում) առուվաճառք իրականացնելն արգելվում է: Սույն մասի պահանջները չեն տարածվում առևտրի իրականացման վայրերում բացառապես գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառքի համար նախատեսված բաց վաճառասեղանների վրա, որոնց մասով օրենքով սահմանված կարգով պարտադիր չէ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը:

5. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչն իր հաշվին, սույն օրենքով սահմանված ժամկետներից սկսած, ծանուցման մեջ նշված առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից ~~«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման~~

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար սահմանված կանոններին համապատասխան կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներդնում ու շահագործում է համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարան, ապահովում է յուրաքանչյուր վաճառատեղի (այդ թվում՝ առևտրի օբյեկտի) և հարկային մարմնի համար տեղեկատվական տվյալների շտեմարանին միանալու հնարավորությունը և տեղեկատվական միասնական համակարգի անխափան աշխատանքը:

ՀՈԴՎԱԾ 6. ՎԱՃԱՌՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Վաճառողը պարտավոր է ապահովել՝

գ) սպառողի (գնորդի) հետ դրամական հաշվարկները հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով իրականացնելու դեպքում վաճառված ապրանքի հետ սպառողին (գնորդին) հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի դրամարկղային չեկի, իսկ առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների իրականացնելու դեպքում՝ ապրանքի գնի վճարումը հաստատող, վաճառողի կողմից հաստատված ձևի, փաստաթղթի տրամադրումը.

ՀՈԴՎԱԾ 7. ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել՝

ե) սույն օրենքով սահմանված կարգով ծանուցման ենթակա առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերին հսկիչ-դրամարկղային մեքենաներով՝ իր հաշվին, ինչպես նաև «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար սահմանված կանոններին համապատասխան՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ հարկային մարմնում գրանցումը.

զ) սույն օրենքով սահմանված կարգով ծանուցման ենթակա առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար սահմանված կանոններին համապատասխան կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարանի ներդրումը և շահագործումը՝ իր հաշվին.

ՀՈԴՎԱԾ 9 ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

15. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտրի առանձնահատկություններն են՝

ը) ~~առաքվող~~մատակարարվող ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթում պարտադիր պետք է նշված լինեն վառարանից արտադրանքի հանման օրը և ժամը.

~~ՀՈԴՎԱԾ 9.1~~ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ

~~1. Եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում օտարման ենթակա (օտարվող)՝ սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:~~

~~2. Եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն են կրում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ անձինք) և Հայաստանի Հանրապետությունում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք:~~

~~2.1. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են մինչև Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման իրացնելու վերջնաժամկետները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով դրոշմավորել իրենց մոտ առկա՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդները:~~

~~Սույն մասով սահմանված դեպքերում անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկամամբ կիրառվում են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով և դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան~~

ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները, եթե վերջինները մասով օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

3. Պարտադիր դրոշմավորման ենթակա չեն ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված արժեքային, բնահիրային և քանակական չափերը չգերազանցող՝ սույն օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված ցանկում ներառված ապրանքները:

4. Սույն օրենքի 9.1-9.6-րդ հոդվածների կիրառման լիազոր մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

(9.1-ին հոդվածը լրաց. 19.12.12 ՀՕ-252-Ն (տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա), 07.05.15 ՀՕ-34-Ն

/տարածվում է 2015 թվականի ապրիլի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա/ օրենքներ)

-

ԻՐՏԵԿ - 9.1-ին հոդվածը փոփոխվելու է 01.01.18 թվականից՝ 24.11.15 ՀՕ-165-Ն

ՀՈԴՎԱԾ 9.2. ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ սույն հոդվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված՝ համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքները արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափածրարված), շշալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար:

-

:

Ծածկագիրը ըստ ՀՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը
2201	Ջրեր՝ ներառյալ բնական կամ արհեստական հանքային ջրերը, գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման	Ջուր

2202	Ջրեր՝ ներառյալ հանքային և գազավորված ջրերը, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելմանը և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ	Լիմպելիք
2203	Գարեջուր	Գարեջուր
2208	Սպիրտային դիրքին դասվող՝ մինչև 9% սպիրտայնությամբ խմիչքներ, ներառյալ՝ ալկոհոլային կոկտեյլներ	Կոկտեյլ
2009	Մրգահյութեր և բանջարեղենի հյութեր, չխմորված և սպիրտ չավելացված	Հյութ
0401	Կաթ և սերուցք՝ ոչ խտացված և առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման	Կաթնեղեն
0402	Կաթ և սերուցք՝ խտացված կամ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	Կաթնեղեն
0403	Թան, մակարդված կաթ և սերուցք, յոգուրտ, կեֆիր և այլ ֆերմենտացված կամ խմորված կաթ և սերուցք՝ խտացված կամ ոչ խտացված, շաքարի հավելմամբ կամ առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման, համաբուրային հավելումներով կամ առանց դրանց, մրգերի, ընկույզների կամ կակաոյի հավելմամբ կամ առանց դրանց	Կաթնեղեն
0901	Սուրճ՝ բրված կամ չբրված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի կեղև և սուրճի հատիկների թաղանթ (պատյան), սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճ պարունակող	Սուրճ
0902	Թեյ՝ համաբուրային հավելումներով կամ առանց	Թեյ

	դրանց		
0903 00 000	մատե կամ պարագվայական թեյ	թեյ
1507	սոյայի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ	ձեթ
	չռաֆինացված, սակայն առանց քիմիական		
	բաղադրության փոփոխության		
1508	գետնանուշի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված	ձեթ
	կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական		
	բաղադրության փոփոխության		
1509	ձիթապտղի ձեթ և դրա խառնուրդամասեր՝ չգտված	ձեթ
	կամ գտված, բայց առանց քիմիական բաղադրության		
	փոփոխության		
1512 11 910	արևածաղկի ձեթ	ձեթ
1512 19 900	արևածաղկի ձեթ	ձեթ
1515 21 900	եգիպտացորենի ձեթ և դրա ֆրակցիաներ	ձեթ
1515 29 900	եգիպտացորենի ձեթ և դրա ֆրակցիաներ	ձեթ
1602	պատրաստի կամ պահածոյացված մթերքներ մսից, մսի	մսեղեն
	ենթամթերքներից կամ արյունից		
1604	պատրաստի կամ պահածոյացված ձուկ,	ձկնեղեն
	թառափազգիների խավիար և դրա փոխարինիչներ՝		
	պատրաստված ձկնկիթի հատիկներից		
1605	պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր,	ձկնեղեն

	կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	
2001	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ	պահածո
2002	լոլիկներ (պոմիդորներ)՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	պահածո
2003	սնկեր և գետնասնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	պահածո
2004	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, սառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքներից	պահածո
2005	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, չսառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքներից	պահածո
2006	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ, պտուղների կեղև և բույսերի այլ մասեր՝ շաքարի միջոցով պահածոյացված (շաքարի օշարակով ներծծված, շաքարահյութով պատված, շաքարահյութով եփված, շաքարված)	պահածո
2007	ջեմեր, մրգային ժելե, մարմելադներ, մրգային կամ ընկույզի պյուրե, մրգային կամ ընկույզի մածուկ՝ ստացված ջերմային մշակումից, այդ թվում՝ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	պահածո

2008	Մրգեր, ընկույզներ և բույսերի ուտելի այլ մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված այլ եղանակով՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր կամ սպիրտ պարունակող կամ չպարունակող՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	պահածո
2101 20	թեյի (պարագվայական թեյի) կամ մատեի հավելումներ և խտանյութեր, դրանց կամ թեյի (պարագվայական թեյի), մատեի հիման վրա պատրաստված պատրաստի արտադրանք	թեյ
2105 00	պաղպաղակ և սննդային սառույցի այլ տեսակներ՝ կակաո պարունակող կամ չպարունակող	պաղպաղակ
2209 00	քացախ և դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից	քացախ
3304	Կոսմետիկ միջոցներ կամ դիմահարդարման և մաշկի խնամքի այլ միջոցներ (բացառությամբ դեղամիջոցների), ներառյալ՝ արևայրուքի դեմ կամ արևայրուքի համար միջոցներ, ծեռքերի կամ ոտքերի մատնահարդարման միջոցներ	կոսմետիկա
3305	Մազերի խնամքի միջոցներ	կոսմետիկա
3401	Օճառ, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և միջոցներ, որպես օճառ կիրառվող (կտորների, թաղակոդիկների կամ կաղապարված ձևով)՝ օճառ պարունակող կամ չպարունակող, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և մաշկը լվանալու համար միջոցներ՝ հեղուկների կամ քսուքների տեսքով՝ կշռաբաշխված մանրածախ առևտրի համար՝ օճառ պարունակող կամ չպարունակող, թուղթ, բամբակ, թաղիք կամ կոբաթաղիք (ֆետր) և չհյուսված նյութեր՝ ներծծված կամ պատված օճառով կամ լվացող	օճառ

	միջոցով	
3402	մակերևութային ակտիվ օրգանական նյութեր (բացի օճառ	
	օճառից), մակերևութային ակտիվ նյութեր,	
	լվացող միջոցներ (ներառյալ՝ օժանդակ լվացող	
	միջոցները) և մաքրող միջոցներ՝ օճառ	
	պարունակող կամ չպարունակող (բացի 3401	
	ապրանքային դիրքի միջոցներից)	
2936	պրովիտամիններ, վիտամիններ	վիտամին
300220000	պատվաստանյութ՝ մարդու համար,	պատվաստա-
	մանրածախ առևտրի համար	նյութ
300230000	պատվաստանյութ՝ կենդանիների համար	պատվաստա-
		նյութ
3003	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ	դեղ
	նպատակներով օգտագործման համար, մանրածախ	
	առևտրի համար չփաթեթավորված	
3004	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ	դեղ
	նպատակներով օգտագործման համար՝ փաթեթավորված	
	մանրածախ առևտրի համար, բացառությամբ	
	պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք	
	բերվող և երաշխավորված կարգով տրամադրվող	
	ինսուլինի կամ թմրամիջոցների կամ հոգեմետ	
	(հոգեներգործուն) նյութ պարունակող դեղերի,	
	որոնց համար դրոշմապիտակով դրոշմավորում չի	
	պահանջվում	
330300	օծանելիք	օծանելիք

(9.2-րդ հոդվածը փոփ. 19.12.12 ՀՕ-252-Ն (տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա), 19.05.14 ՀՕ-20-Ն /օրենքն ունի անցումային դրույթներ/, 21.06.14 ՀՕ-108-Ն /օրենքն ունի անցումային դրույթներ/, 21.06.14 ՀՕ-108-Ն, 21.12.15 ՀՕ-6-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 9.3. ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման հարկային տեսչությունից, իսկ Հայաստանի Հանրապետության տարածք պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անձինք՝ իրենց հաշվառման մարմնից՝ մինչև այդ ապրանքների օտարումը:

2. Դրոշմապիտակները տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ նրանց կողմից դրոշմապիտակների ձեռք բերման ամբողջ արժեքը նախապես պետական բյուջե վճարելու դեպքում:

3. Դրոշմապիտակները տրամադրվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածով սահմանված կարգով՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված՝ դրոշմապիտակի ձեռքբերման հայտի (այսուհետ՝ հայտ) հիման վրա: Դրոշմապիտակները տրամադրվում են դրանց ձեռքբերման համար հայտ ներկայացրած կազմակերպության լիազորած ֆիզիկական անձին, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա լիազորած ֆիզիկական անձին, եթե դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից դրոշմապիտակների պահանջվող քանակության համար կատարվել է վճարում: Ընդ որում, հայտով պահանջվող դրոշմապիտակների քանակության համար վճարման ենթակա գումարը կարող է պակասեցվել դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար ավել վճարված և հայտի ներկայացման օրվա դրությամբ չհաշվանցված և (կամ) չվերադարձված գումարների չափով:

4. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող և (կամ) ներմուծող՝

1) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն մասի 2-րդ կետում նշված դեպքերի) մինչև ապրանքների իրացումը (իսկ ցանկության դեպքում՝ մինչև ապրանքների արտադրությունը կամ ներմուծումը) էլեկտրոնային եղանակով կատարում են գրանցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով ճշգրտումներ են կատարում այդ գրանցումներում.

2) օրենքով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են մինչև ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցումներ չկատարել, եթե գրանցման ենթակա բոլոր տվյալները (բացառությամբ

տրամադրվելիք դրոշմապիտակների սերիաների ու հերթական համարների) նշում են դրոշմապիտակների ձեռքբերման հայտում: Սույն կետում նշված հարկ վճարողները անհրաժեշտության դեպքում կարող են, մինչև ապրանքների իրացումը, էլեկտրոնային եղանակով գրանցումներ կատարելու միջոցով ճշգրտել նախկինում իրենց կողմից ներկայացված՝ դրոշմապիտակների ձեռքբերման հայտում նշված տվյալները:

Սույն մասի կիրառության իմաստով՝

ա. մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարումը և (կամ) գրանցման ենթակա բոլոր տվյալներով դրոշմապիտակների ձեռքբերման հայտի ներկայացումը չեն դիտվում որպես էլեկտրոնային գրանցումներում կամ դրոշմապիտակների ձեռքբերման հայտում նշված ապրանքների իրացում,

բ. մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցվում են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը), քանակությունը և համապատասխան դրոշմապիտակների սերիաներն ու հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով):

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ դրոշմապիտակների տրամադրման պայմանները բավարարված լինելու դեպքում դրոշմապիտակները տրամադրվում են 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Դրոշմապիտակների ստացումը հաստատվում է ստացականով:

6. Հարկային տեսչությունները յուրաքանչյուր արտադրողի, իսկ մաքսատները յուրաքանչյուր ներմուծողի համար վարում են դրոշմապիտակների հաշվառման քարտեր՝ ըստ դրոշմապիտակների տեսակների: Քարտում նշվում են տրամադրված կամ հետ ընդունված դրոշմապիտակների քանակները, սերիաները և համարները:

7. Սույն հոդվածով նախատեսված հայտի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

(9.3-րդ հոդվածը փոփ. 19.12.12 ՀՕ-252-Ն (տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա), 19.05.14 ՀՕ-20-Ն

/օրենքն ունի անցումային դրույթներ/ օրենքներ)

-

ԻՐՏԵԿ - 9.3-րդ հոդվածը փոփոխվելու է 01.01.18 թվականից՝ 24.11.15 ՀՕ-165-Ն

ՀՈԴՎԱԾ 9.4 ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ (ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող անձինք ապրանքների դրոշմավորումն իրականացնում են

ինքնուրույն՝ սույն օրենքի 9.3-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված դրոշմապիտակները այդ ապրանքների վրա փակցնելու միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել ապրանքի արտադրության կամ իրացման նախապատրաստման ցանկացած փուլում՝ իրենց կողմից ընտրված տարածքում, բայց ոչ ուշ մինչև այդ ապրանքների օտարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածք պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անձինք ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել նախքան այդ ապրանքները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելը կամ ներմուծելուց հետո՝ ներմուծող անձի կողմից ընտրված տարածքում, բայց ոչ ուշ մինչև այդ ապրանքների օտարումը:

4. Դրոշմավորված ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված, ամբողջական և դրոշմավորման ենթակա ապրանքի տարողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) համապատասխանող դրոշմապիտակ:

5. Ապրանքների դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնները (այդ թվում՝ դրոշմավորման ենթակա յուրաքանչյուր ապրանքախմբի համար դրոշմապիտակի փակցման տեղը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Արգելվում է դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ անձանց, բացառությամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով արտահանված դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանագիր կողմին փոխանցելը:

(9.4-րդ հոդվածը փոփ. 19.12.12 ՀՕ-252-Ն (տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա), 19.05.14 ՀՕ-20-Ն

/օրենքն ունի անցումային դրույթներ/ օրենքներ)

-

ԻՐՏԵԿ - 9.4-րդ հոդվածը փոփոխվելու է 01.01.18 թվականից՝ 24.11.15 ՀՕ-165-Ն

ՀՈԴՎԱԾ 9.5 ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼԸ

1. Դրոշմապիտակների նմուշները (այդ թվում՝ ձևը, գույնը) և տեխնիկական պահանջները սահմանում է հարկային և մաքսային վերադաս մարմինը: Ներմուծվող և տեղական արտադրության ապրանքների դրոշմապիտակները պետք է տարբերվեն գույներով և համապատասխանաբար «ներմուծված» կամ «տեղական» մակագրություններով:

Դրոշմապիտակի վրա պետք է անգեն աչքով տեսանելի նշված լինեն (կամ դրոշմապիտակը պետք է հնարավորություն ընձեռի Apple iOS 6,

~~Android 4, Windows Phone 8, ինչպես նաև համարժեք կամ առավել բարձր օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային շարժական սարքի (բջջային հեռախոս, պլանշետ և այլն) միջոցով տեսանելի դարձնել) ապրանքն արտադրողի կամ ներմուծողի անվանումը, հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, ապրանքի տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), ապրանքի տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը, բացառությամբ սույն օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401 և 3402 ծածկագրերին դասվող այն ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների, որոնց համար հնարավոր չէ սահմանել համապատասխան չափման միավոր):~~

~~2. Դրոշմապիտակի դարձերեսը պետք է ծածկված լինի փակցնելուց հետո այն անվնաս պոկելու հնարավորությունը բացառող սոսնձով:~~

~~3. Դրոշմապիտակի արժեքը որոշվում է տվյալ նմուշի դրոշմապիտակի արտադրության, պահպանության, օգտագործումից հանելու հետ կապված ծախսերից: Յուրաքանչյուր օրացուցային տարում կիրառվող դրոշմապիտակների արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Դրոշմապիտակների սահմանված արժեքը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում՝ յուրաքանչյուր տարվա սկզբից առնվազն մեկ ամիս առաջ: Սույն մասով սահմանված ժամկետում դրոշմապիտակների արժեքը չհրապարակվելու դեպքում տվյալ օրացուցային տարում կիրառվում է դրոշմապիտակի նախորդ տարվա արժեքը:~~

~~4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սահմանած նմուշի դրոշմապիտակները կիրառության մեջ դրվում և կիրառությունից հանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:~~

~~5. Կիրառությունից հանված դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների օտարումը թույլատրելի լինելու ժամկետից հետո կարող է իրականացվել անմիջական արտադրողի կամ անմիջական ներմուծողի կողմից ապրանքների՝ նոր նմուշի դրոշմապիտակներով դրոշմավորված (հերթական թվով նմուշի դրոշմապիտակով վերադրոշմավորված) լինելու դեպքում:~~

~~*(9.5-րդ հոդվածը փոփ. 19.12.12 ՀՕ-252-Ն (տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա), 19.05.14 ՀՕ-20-Ն*~~

~~/օրենքն ունի անցումային դրույթներ/ օրենքներ)~~

~~-~~

~~---~~

~~ԻՐՏԵԿ - 9.5-րդ հոդվածը փոփոխվելու է 01.01.18 թվականից՝ 24.11.15 ՀՕ-165-Ն~~

~~---~~

~~-~~

~~---~~

~~ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում~~

~~-~~

~~-~~

~~ՀՈԴՎԱԾ 9.6.~~ ~~ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԵՎ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎՆԱՍՎԱԾ) ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ~~

~~-~~

~~1. Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված ապրանքների դրոշմավորման համար օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը (բացառությամբ այն դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարների, որոնք չեն օգտագործվել և չեն վերադարձվել) հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևով դիմումի հիման վրա հաշվանցվում է հարկային պարտավորությունների դիմաց:~~

~~Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարներից ավելի վճարված գումարները դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվանցվում են հարկ վճարողի առկա և (կամ) հետագա հարկային պարտավորությունների դիմաց, իսկ դրանց բացակայության դեպքում՝ վերադարձվում: Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարներից ավելի վճարված գումարները կարող են հաշվանցվել նաև նոր ձեռք բերվող դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարի դիմաց:~~

~~2. Ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային կամ մաքսային մարմին՝ համապատասխան արտադրությունը կամ ներմուծումը դադարեցնելու ամսվան հաջորդող եռամսյա ժամկետում:~~

~~3. Տվյալ նմուշի չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են կիրառությունից հանելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող եռամսյա ժամկետում:~~

~~4. Փակցնելու ընթացքում վնասված դրոշմապիտակները սույն հոդվածով սահմանված կարգով և դեպքերում վերադարձվում են հարկային կամ մաքսային մարմին՝ յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:~~

~~5. Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը սույն հոդվածով սահմանված ժամկետներից ուշացնելու, սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում հարկային տեսչությունների կամ մաքսատների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը և տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին:~~

~~6. Սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված՝ պիտանելիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների գծով հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե համապատասխան հաշվարկային և այլ փաստաթղթերով հիմնավորվում է, որ տվյալ ապրանքները պիտանելիության (պահպանման) ժամկետի ընթացքում չեն իրացվել և այդ ժամկետի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով դուրս են գրվել:~~

Պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարով նախկինում նվազեցված հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի կամ ներմուծողի մոտ այդ ապրանքների դուրսգրման օրվա դրությամբ առաջանում է դրոշմապիտակների գծով պարտավորություն: Սույն մասին համապատասխան առաջացող՝ դրոշմապիտակների գծով չմարված պարտավորության գումարի նկատմամբ հաշվարկվում են օրական տույժեր՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով: Սույն մասով սահմանված՝ դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձման համար տնտեսավարող սուբյեկտները հարկային կամ մաքսային մարմին են ներկայացնում դիմում՝ նշելով դրոշմապիտակների վերադարձման պատճառները:

Հարկային կամ մաքսային մարմինը դրոշմապիտակներ վերադարձնելու մասին դիմումը ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգում է վնասված դրոշմապիտակների համապատասխանությունը սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջներին և ընդունում է որոշում օրենքի պահանջներին դրանց համապատասխանության մասին: Չօգտագործված դրոշմապիտակները հետ են ընդունվում առանց սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը ստուգելու: Չօգտագործված դրոշմապիտակների համար վճարված գումարը հաշվանցվում է հարկ վճարողի հարկային և պարտադիր վճարների գծով պարտավորությունների դիմաց, իսկ դրանց բացակայության դեպքում վերադարձվում է հարկ վճարողին: Վնասված և հետ ընդունված կամ հետ չընդունված դրոշմապիտակների համար վճարված գումարը վերադարձման ենթակա չէ:

8. Հարկ վճարողի կողմից վերադարձվող դրոշմապիտակները հարկային կամ մաքսային մարմինների կողմից չեն ընդունվում, եթե չեն պահպանվել հետևյալ պայմանները՝

1) դրոշմապիտակները պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ առանց ծալքերի և անհարթությունների.

2) պետք է պարզ երևան դրոշմապիտակի սերիան և դրա կենտրոնական մասը.

3) դրոշմապիտակների պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացված լինեն.

4) վերադարձվող յուրաքանչյուր դրոշմապիտակի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը:

(9.6-րդ հոդվածը լրաց. 19.12.12 ՀՕ-252-Ն (տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա), 19.05.14 ՀՕ-20-Ն

/օրենքն ունի անցումային դրույթներ/ օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 15.1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ (ԿԱՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առևտուր և (կամ) ծառայություն իրականացնելիս գնորդին պետք է հասանելի լինի հետևյալ տեղեկատվությունը.

բ) գնորդի նշած վայր ապրանքի ~~առաքման~~մատակարարման (աշխատանքի կատարման, ծառայության մատուցման) սահմանափակումները՝ մինչև գնորդի կողմից ապրանքը գնելու գործողությունն սկսելը.

4. Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն ~~Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվառված լինելու (հարկ վճարողի հաշվի համար ունենալու)~~որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար: